# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №5-Լ

«16» 01 2023 թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազ Արսեն Ռաֆիկի Արսենյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և վարչական շրջանների դատախազի պարտականությունների կատարումը նույն վարչական շրջանների դատախազի տեղակալ Ժորա Բենիկի Թովմասյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի համապատասխանաբար՝ հունվարի 12-ի N 9-Ա և հունվարի 13-ի N 10-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ՝**

1. Կատարել Ա.Արսենյանի կողմից՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում,

իսկ Ժ.Թովմասյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Մանասյան Անահիտ - | ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Գրիգորյան Ռոբերտ - | Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ, |
| Մարտիրոսյան Հայկ - | ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ, |
| Ղահրամանյան Մարուշ - | ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար, |
| Նազարեթյան Արմինե - | ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ, |
| Գևորգյան Թամարա - | ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար, |
| Մաթևոսյան Մարիամ - | Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-

վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի հունվարի 30-ը:

**Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**